ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐ ՊՐՈՖԵՍՈՐ
Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

13 հունիսի, 2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի Սոցիալական փիլիսոփայության բաժնի հայցորդ Սոնա Արայի Դավթյանի՝ «Կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի և արժեբանության նոր ձև» թեմայով Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Սոնա Արայի Դավթյանի ներկայացրած աշխատանքում քննարկվում են կենսաբարոյագիտության մի շարք էական հիմնահարցեր: Միաժամանակ, ատենախոսը վեր է լուծում բիոէթիկան որպես միջգիտակարգային բնագավառ, պրակտիկ փիլիոփայություն, էթնո-մշակութային երևույթ, երկխոսություն:

Մեր օրերում կենսատեխնոլոգիաների խելահեղ զարգացումը գլխապտույտ ազդեցություն է թողնում բոլորի վրա: Բացառություն են կազմում միայն նրանք ովքեր որդեգրում են ոլորտն անտեսելու մարտավարությունը՝ պնդելով, թե բիոէթիկան՝ հարուստ, բարգավաճ երկրներին վերաբերող խնդիր է, թե մեզանում «օտար» բնագավառ է և չի առնչվում հայ իրականությանը, թե ավանդական բժշկական էթիկան բավարար է և այլն և այլն:

Իրականում կենսատեխնոլոգիաների առաջացրած էթիկական և բարոյական մարտահրավերները վերաբերում են բոլորիս՝ անկախ նրանից գիտակցում ենք դա, թե ոչ և անկախ մեր դիրքորոշումներից: Մեր ժամանակներում կենսատեխնոլոգիական զարգացումներն ահագնացող դերակատարումներ ունեն այնպիսի տարաբնույթ բնագավառներում, ինչպիսիք են սննդի գենային անվտանգությունը, գենային ինժեներիայի միջամտությամբ ծնված կենդանիների օգտագործումը մարդկային օրգանների կլոնավորման մեջ, անպտղության բուժումը, գիտական փորձարկումների արդյունքում ստեղծված

դեղամիջոցների անվտանգությունը և այլն: Հստակ է, որ այս նորագույն տեխնոլոգիաների բուժարար դրական ազդեցության կողքին և դրանց զարգացմանը զուգահեռ առաջացել են մի շարք խնդիրներ, որոնց քննարկումը հետևողական և փիլիսոփայական վերլուծություն է պահանջում:

Որո՞նք են բիոէթիկայի՝ որպես միջգիտակարգային գիտական գիտելիքի աշխարհայացքային և արժեբանական հիմքերը, որո՞նք են մարդու կյանքի և առողջության պահպանման ազատական և պահպանողական մոտեցումները, ինչո՞վ են պայմանավորված Հայաստանում բիոէթիկայի սկզբունքների իրագործման դժվարությունները, որո՞նք են ազգային այն առանձնահատկությունները, որոնք խոչընդոտում են կյանքի և առողջության նկատմամբ նոր արժեհամակարգի ձևավորմանը, համամարդկային և ազգային արժեքների փիլիսոփայական իմաստավորման միջոցով ինչպե՞ս բացահայտել բիոէթիկայի՝ որպես նոր գիտակարգի կայացումը Հայաստանում, ի՞նչ բովանդակություն ունեն բիոէթիկայի պրոբլեմային դաշտի՝ գենային թերապիայի, կյանքի և մահվան սահմանային իրավիճակների, իրազեկված համաձայնության, փոխպատվաստաբանության, բժշկության առևտրայնացման և այլնի բարոյափիլիսոփայական հիմնահարցերը մեր հանրապետությունում:

Ահա այն ոչ լրիվ հարցերի շարքը, որոնց պատասխանները կարելի է գտնել Ս. Ա. Դավթյանի «Կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի և արժեբանության նոր ձև» ատենախոսական թեզում՝ ներկայացված փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով:

Ատենախոսն իմաստավորում է բիոէթիկայի հնարավորությունները՝ մարդու կյանքի, նրա գոյության հիմնարարար պրոբլեմների լուծման գործում, այդ թվում, կապելով նեոհումանիզմի և պոստհումանիզմի հրամայականների, պահանջների հետ:

Ատենախոսության կարևոր առանձնահատկությունն այն է, որ իր նորմատիվ-էթիկական հետազոտությունները և առաջարկվող որոշումները կոնկրետացնում է հայ պատմափիլիսոփայական ավանդույթների համատեքստում:

Ս. Դավթյանը թվում է, թե համեմատում է իր մոտեցումները միջնադարյան հայ մտածողների՝ Անհաղթի, Տաթևացու, Գոշի և այլոց մոտեցումների հետ:

Էֆթանազայի վերաբերյալ նրա արտահայտած մտքերը համընկնում են ոչ միայն ՀՀ ԱԺ ընդունած որոշումների հետ, այլև միջնադարյան հայ մտածողների գաղափարների հետ:

Սակայն հարկ է նշել, որ տվյալ մեթոդաբանական ընթացքը կարիք ունի հատուկ ուշադրության և ստուգման. մի բան է գաղափարի և մոտեցումների գերակառուցումը փիլիսոփայական մտքի պատմության մեջ, և այլ բան՝ արդի հասարակական պահանջմունքների էթիկա-նորմատիվ մշակումները, որոնք պետք է կողմնորոշված լինեն ոչ միայն ավանդական հումանիտար, և կրոնաաստվածաբանական մտքին, այլ այսօրվա արդի հասարակական պահանջմունքներին:

Անցկացված հետազոտության այս երկու ռեֆերենտ դաշտերը կարող են համընկնել և կարող են նաև տարբերվել: Բայց հարցն այն է, թե ինչ չափով կարող է տվյալ ինտելեկտուալ ավանդույթը ծառայել որպես հիմք՝ էթիկա-պրակտիկ և քաղաքական-իրավական որոշումների համար:

Սա կարիք ունի լրացուցիչ լուրջ քննարկման: Եվ հուսով ենք, որ ատենախոսն իր հետագա աշխատանքներում այն հաշվի կառնի:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտված գրականության ցանկից: Ներածության բաժնում ատենախոսը հստակ հիմնավորում է՝ ա) թեմայի արդիականությունը, նշելով որ այն պայմանավորված է բիոէթիկական հայեցակարգերի համակարգայնացման, բիոէթիկական հիմնախնդիրների լուծման ուղիների փիլիսոփայական ուսումնասիրման անհրաժեշտությամբ: բ) Ներկայացնում է հետազոտական թեմայի մշակվածության աստիճանը (արևմուտքում, հետխորհրդային տարածքում, Հայաստանում), ընդգծելով այն միտքը, որ լուծման կարոտ են բիոէթիկական հիմնախնդիրների ուսումնասիրման, սկզբունքների ներդրման ռազմավարական ուղիների մշակման հարցերը: գ) Ձևակերպվել են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, տեսական աղբույրները, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության հաջողված մաս կազմող առաջին՝ «Բիոէթիկան որպես կյանքի, առողջության և մահվան նոր փիլիսոփայություն» գլուխը նվիրված է փիլիսոփայության և բիոէթիկայի փոխադարձ կապի դիալեկտիկային: Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ փիլիսոփայության մեջ մարդու հիմնախնդիրը, նրա ազատ զարգացման ուղիների որոնումները, մարդու էկզիստենցիալ իրավունքների պաշտպանությունը, առավել ևս այսօր՝ կենսատեխնոլոգիական բուռն, աննախընթաց զարգացումների պայմաններում, ավելի քան արդիական է ու կարևոր: Հիմնահարցի լուծումն ատենախոսն իրավացիորեն կապում է մարդու հիմնախնդրի գիտատեսական խոր հետազոտությունների հետ՝ հաշվի առնելով մարդու բնույթի և էության մասին բնագիտական և փիլիսոփայական նորագույն պատկերացումները: Ինչպես են միմյանց հետ հարաբերակցվում կյանքի իմաստի, բարու և չարի, մահվան և անմահության «հավերժական» հիմնախնդիրները բիոէթիկական համապատասխան հիմնահարցերի լուծումների հետ: Պատասխաններն, ըստ ատենախոսի, պահանջում են հստակեցնել մարդուն նվիրված փիլիսոփայական ուսումնասիրությունների առարկայական տիրույթը:

Արդի գիտության ամենահիմնավոր հարցերից մեկը մնում է մարդու՝ որպես կենդանի բնության /կենսոլորտի/ մասնիկի ու միաժամանակ տիեզերամոլորակային երևույթի, հիմնահարցը: Վերջինս, սակայն, այլևս չի կարող քննարկվել ավանդական, այն է՝ մարդու մեջ կենսաբանականի և հասարակականի փոխկապակցվածության մասին դատողությունների համատեքստում: Որպես «կենսահասարակական համադրում» մարդու

ընկալումը խիստ սահմանափակ է և չի բավարարում գիտական ճանաչողության արդի պահանջներին:

Ատենախոսությունն ամփոփում է հիմնախնդրի հետ կապված ելակետային դրույթների վերաբերյալ ժամանակակից գիտական աշխարհում գերիշխող մոտեցումները, համակարգված վերլուծում դրանք, ներկայացնելով իր մոտեցումներն ու մեկնաբանությունները:

Ատենախոսության երկրորդ «Կենսաբարոյագիտության հիմնահարցերի փիլիսոփայական մեկնաբանության առանձնահատկությունները» գլուխը քննական ուսումնասիրության է ենթարկում կյանքի և առողջության նորմատիվ կարգավորման փիլիսոփայական ասպեկտները: Հիմնավորված է այն դրույթը, որ մարդկության գոյատևման ռազմավարական հրամայականները պահանջում են գլոբալ հիմնախնդիրների նկատմամբ նոր, միասնական մոտեցումներ: Այդպիսի մոտեցումներից է բիոէթիկան, որի ծագումը որպես միջգիտակարգային գիտելիքի բնագավառ, պայմանավորված է մարդու կյանքի մեջ գիտության և տեխնիկայի հնարավոր միջամտության սահմանների հստակեցման սոցիո-մշակութային և փիլիսոփայական անհրաժեշտությամբ:

Օգտվելով սոցիոլոգիական և փիլիսոփայական վերլուծության մեթոդներից հեղինակը լիովին հասել է իր նպատակին՝ ներկայացնելով բիոէթիկայի իմացական տիրույթը, փիլիսոփայական էությունը:

Ատենախոսությունը փաստորեն հայտ է բիոէթիկայի փիլիսոփայություն ինքնուրույն գիտաճյուղի կայացման, զարգացման համար, իսկ դա նպաստավոր է նաև հարակից գիտաճյուղերի և հենց բուն փիլիսոփայության համար: Ս. Ա. Դավթյանի ատենախոսությունը գրված է գիտական բարեխղճությամբ, խնամքով ու գրագետ: Բովանդակությունն արտացոլող գլուխներն ու վերնագրերն ավելի քան համոզիչ են ու համահունչ, հիմնահարցերի բարձրացման, ուսումնասիրման և վերլուծման քայլերը տրամաբանորեն հիմնավորվում, փաստարկվում, կապակցվում ու հաջորդում են միմյանց:

Գիտափիլիսոփայական եզրակացությունների հիման վրա առաջարկվել են պրակտիկ լուծումներ, որոնք արատացոլվել են բիոէթիկայի դասավանդման, բիոբժշկական հետազոտությունների անցկացման, ինչպես նաև ՀՀ հասարակության էթիկական և հասարակական գիտակցության նորմատիվ դաշտի կատարելագործման համար:

Այդուհանդերձ աշխատանքի մեջ առկա են որոշ բացթողումներ, թերություններ, որոնց հաշվի առնելը, մեր կարծիքով, ավելի ամբողջական կդարձներ սույն ուսումնասիրությունը: «Կյանքի և առողջության նկատմամբ վերաբերմունքի արժեբանական նոր մոդելի մշակման հիմնախնդիրը» ենթագլխում ատենախոսը վերլուծության է ենթարկել անտիկ շրջանի փիլիսոփաների / Պլատոն, Արիստոտել/, այնուհետև Սպինոզայի, Հեգելի, Նիցշեի, ինչպես նաև էկզիստենցիալիստների /Հայդեգեր, Յասպերս, Բերդյայև և այլք/ փիլիսոփայության մեջ

մահվան նկատմամբ մարդու վերաբերմունքի դրսևորումները, կանգ առել մարդկային գոյության անելանելիության և անիմաստության գաղափարի վրա:

Մինչդեռ այդ երևույթների քննարկմանը պետք է նախորդեր կյանքի ֆենոմենի քննարկումը: Չէ՞ որ կյանքն է պայմանավորում այդ երևույթների քննարկման անհրաժեշտությունը: Պատմամշակութային բոլոր դարաշրջաններում կյանքի հիմնախնդիրն է եղել փիլիսոփայական մտորումների գլխավոր առարկան /Անտիկ շրջան, կյանքի փիլիսոփայություն, գոյության փիլիսոփայություն և այլն/:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Էֆթանազիայի և հոսպիսի կենսափիլիսոփայությունը», հիշատակվում են մի շարք դասականներ, ինչպես արևմտյան /Ֆ. Բեկոն/, այնպես հայ /Մխիթար Գոշ, Սմբատ Գունդստաբլ/: Մինչդեռ անհրաժեշտ էր ոչ թե պարզապես հիշատակել այդ անունները, այլ վերլուծել այդ հեղինակների աշխատանքները և հղել դրանց համապատասխան գաղափարները: Քննարկվում են մահվան, էֆթանազիայի և պալեատիվ բժշկության ֆենոմենները: Արվում է համեմատական վերլուծություն արտասահմանյան երկրների և Հայաստանի միջև:

Շարադրման ընթացքում ատենախոսն օգտագործում է մի շարք եզրեր (տերմիններ), որոնք ունեն իրենց հայերեն հոմանիշը, սակայն չգիտես ինչու միշտ չէ, որ օգտագործվում են (այսպես օրինակ՝ պալեատիվ – ամոքիչ, էջ 190 պրոֆեսիոնալիզմ – արհեստավարժություն, էջ 79, էքսպերիմենտ – գիտափորձ, էջեր 187, 201 և այլ, ինֆորմացիա – տեղեկություն, ֆունկցիա – գործառույթ, սիստեմ – համակարգ և այլն):

Ատենախոսության մեջ օգտագործված սոցիոլոգիական հարցումների արդյունքները ներկայացնելիս նպատակահարմար և ճիշտ կլիներ ներկայացնել ոչ միայն այդ հարցումների անցկացման մեթոդիկան. ծրագիրը, խնդիրները,հետազոտվողների թիվը, ժամանակահատվածը, փուլերը, կատարել մոնիտորինգ, համեմատական վերլուծություն՝ այսօրվա և երեկվա միջև, թարմացնել տվյալները:

ՀՀ-ում այսօր էական թերացումներ և բացթողումներ կան էկոլոգիական հարցերում, որոնց ատենախոսը համարյա թե չի անդրադարձել: Չի անդրադարձել նաև արդիական այնպիսի հարցերի, ինչպիսիք են ներմուծվող սննդի գենային անվտանգությունը, ինչպես նաև գիտական փորձարկումների արդյունքում ստեղծված, նաև ներմուծված դեղամիջոցների անվտանգությունը: Համաճարակաբանության բիոէթիկական հիմնախնդիրներին, թագաժահրի՝ Covid-19-ի համընդհանուր պատվաստման և ՁԻԱՀ-ի բարոյաիրավական ասպեկտներին ատենախոսն անդրադարձել է շատ հպանցիկ, մինչդեռ դրանք արդիական հիմնախնդիրներ են թե աշխարհի, թե առավել ևս ՀՀ-ի համար: Հեռավար ուսուցման խնդիրը և դրանից բխող հիմնահարցերը առաջնային քննարկման առարկա են դարձել ոչ միայն ՀՀ-ում, այլև համաճարակից տուժած բոլոր երկրներում:

Ատենախոսության մեջ նկատելի են մի շարք վրիպակներ, առանձին հղումներում բացակայում են էջեր /էջ 117՝ առաջին հղում, էջ 159՝ երկրորդ հղում, էջ 186՝ առաջին հղում, էջ 195՝ առաջին հղում/:

Սակայն, այդուհանդերձ, նշված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժեքը: Ընդհանուր առմամբ Ս.Ա. Դավթյանի «Կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի և արժեբանության նոր ձև» ատենախոսական թեզը ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, որը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, լրացնում է ՀՀ-ում նմանատիպ աշխատանքների ակհայտ բացը, իսկ ատենախոսն արժանի է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման Թ.00.01 «Փիլիսոփայություն» թվանիշով:

Նշված թերությունները սակայն, չեն նվազեցնում պաշտպանության ներկայացված «Կենսաբարոյագիտությունը որպես միջգիտակարգային գիտելիքի և արժեբանության նոր ձև» թեկնածուական ատենախոսության գիտական արժեքը:

Կարծիքը քննարկվել է հասարակագիտական առարկաների ամբիոնի 2021թ. հուլիսի 12-ի նիստում (Արձանագրություն թիվ 10), որին մասնակցում էին ամբիոնի վարիչ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ.Հ. Մելիքյանը, փ.գ.դ. դոցենտ Ս. Հ. Դավթյանը, փ.գ.թ. դոցենտ Մ. Գ. Կճանյանը, դոցենտներ՝ պ.գ.թ. Ա.Վ. Ղամբարյանը, ավագ դասախոսներ՝ փ.գ.թ. Ռ.Խ. Տիգրանյանը, փ.գ.թ. Ա.Պ. Մելքոնյանը, պ.գ.թ. Ա. Ա. Տետեյանը, փ.գ.թ. Ռ. Վ. Նեմիշալյանը, դասախոսներ՝ Ա.Ս. Ասլանյանը, Ա.Մ. Ճերմակյանը, Անժ.Ա. Տետեյանը, ասիստենտներ՝ Լ.Ս. Չոբանյանը, Ն. Ժ. Հովհաննիսյանը:

Սոնա Արայի Դավթյանի ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հասարակագիտական առարկաների ամբիոնի
վարիչ պ.գ.դ. պրոֆեսոր Վ.Հ. Մելիքյան

Ամբիոնի վարիչի ստորագրությունը հաստատում եմ՝

Մ. Հերացու անվան ԵՊԲՀ
գիտքարտուղար բ.գ.դ. պրոֆեսոր Տ.Գ. Ավագյան